«Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Վերապատրաստվող ուսուցչի

Հետազոտական աշխատանք

Առարկա՝

Կենսաբանություն

Թեմա՝

Սովորողների մոտ, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման ձևավորումը կենսաբանության դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝

Արևիկ Մեժլումյան

Ք.Արարատ, Թիվ 5 միջնակարգ դպրոց

Վերապատրաստող՝

Ալվարդ Կարապետյան

Արարատ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն 2

Ներածություն 3

Նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման ձևավորումը սովորողների մոտ..... 4

Պետական չափորոշչային պահանջները 4

<<Բնության պահպանություն>> թեման ուսումնասիրելիս նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման ձևավորումը 5

<<Աղբն ու մոլորակը>>..... 9

Եզրակացություններ…….....10

Առաջարկություններ..... 11

Գրականության ցանկ 11

Ներածություն

Ժամանակակից հասարակությունը կարիք ունի բազմակողմանի զարգացած ստեղծագործ անհատների, քանի որ նրանք ունեն հարմարվողականության և սոցիալականացման ավելի բարձր մակարդակ և ավելի շատ են համապատասխանում անընդհատ փոփոխվող և նորացվող աշխարհին:

Կրթության հիմնական նպատակն է երիտասարդ սերնդին ապագային նախապատրաստելը: Ստեղծագործելը այն ուղին է, որը կարող է արդյունավետ կերպով իրականացնել այս նպատակը: Ստեղծագործ անձի կրթության ինտեգրված մոտեցումը ներառում է ընդհանուր գեղագիտական և բարոյական դաստիարակության խնդիրներին վերաբերող հարցերի լայն շրջանակ: Գաղափարական աշխարհայացքային, հոգևոր և գեղարվեստական արժեքների անքակտելի միասնությունը էական պայման է աճող անձի,բազմակողմանի զարգացման և ներդաշնակության համար;

Ըստ Մարկ Ֆիշերի, միշտ ստեղծագործ լինել նշանակում է լինել ամենակարող: Չկա ավելի լավ և ապագայի համար ավելի ապահով երաշխիք, քան ամեն անգամ ստեղծագործելու ունակությունը,անհրաժեշտության դեպքում ,ցանկացած պահի լինել պատրաստ որոշել խնդրահարույց հարցեր և մշակել նոր հասկացություններ:

Նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման ձևավորումը սովորողների մոտ

Պետական չափորոշչային պահանջները

Ըստ հանրակրթությսն պետական չափորոշչային պահանջի ճկուն, բազմակողմանի զարգացած, ստեղծագործող, նախաձեռնող անձ ձևավորելու համար պետք է սովորողների հետ աշխատել սկսած նախադպրոցական ուսումնական հաստատություններից, ապա շարունակել դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում:Սովորողները պետք է կարողանան տեսնել գեղեցիկը և գնահատել այն,ձևավորեն գեղագիտական ճաշակ ,

կարողանան ինքնուրուն և մյուսների հետ համատեղ սովորել, գործել կյանքի տարբեր իրավիճակներում, ճանաչեն իմացածի և չիմացածի սահմանները,ինքնակազմակերպվեն և ձևավորեն ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն:Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորեն բազմակողմանի ուսումասիրելու,վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություն,ինքնակազմակերպման միջոցով ձգտեն ինքնաճանաչման, նրանք ձևավորեն վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ, հաջողությամբ կառավարեն սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև ապահովեն մասնագիտական կողմնորոշում, ցուցաբերեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն, տիրապետեն մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին,

ինչպես նաև կարողանան արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները և այլն:

Կենսաբանության դասավանդման ընթացքում վերը նշված ունակությունների ձևավորումը առավել հեշտ ու արդյունավետ կլինի հետազոտական, նախագծային աշխատանքների, կազմակերպված էքսկուրսիաների ժամանակ;

Մարդ արարածը լինելով բնության մի մասնիկը նրա մեջ ցանկացած բնույթի կարողություն, հմտություն, արժեհամակարգ և ունակություն հեշտ կլինի ձևավորել բնության երևույթների, բնապահպանական հիմնախնդիրների ուսումնասիրման արդյունքում:

<<Բնության պահպանություն>> թեման ուսումնասիրելիս նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման ձևավորումը

Դասի պլան

Թեմա՝ Բնության պահպանություն

Թեմայի նպատակը՝ Աշակերտներին ծանոթացնել բնապահպանական հիմնախնդիրներին՝ օդի, ջրի, հողի, կենսաբազմազանության:

Վերջնարդյունք՝

. Կարողանա իրականացնել էկոլոգիական տեղեկատվության հավաքագրում

. Կարողանա բացատրել բնության պահպանության հիմնախնդիրների առաջացման պատճառները, հետևանքները

. Կարողանա տեսնել բնության փոփոխությունների և մարդու գործունեության միջև եղած պատճառահետևանքային կապերը

. Կանխագուշակել էկոլոգիական իրավիճակները

. Դասակարգել տեղեկատվական նյութեր

. Արժնորի շրջակա միջավայրի պահպանությունը, բնության հետ ներդաշնակ ու առողջ ապրելու անհրաժեշտությունը, իր դերը բնության պահպանության խնդիրների լուծման գործում:

<<Բնության պահպանություն>> թեմայի իրականացումը նախագծային տեխնոլոգիայի միջոցով:

Նախագծի փուլերը

. Նախապատրաստական փուլ

. Պլանավորման փուլ

. Կազմակերպչական - հետազոտական փուլ

. Արդյունքների ներկայացման փուլ

Նախապատրաստական փուլը իր մեջ ներառում է հետևյալ քայլերը

Ուսուցիչը՝

. Ներկայացնում է բնության պահպանման ձ կարևոր բաղադրիչների՝ օդի, ջրի, հողի, կենսաբազմազանության հիմնախնդիրները՝ ուսումնական ֆիլմերի կամ դասախոսության միջոցով, ապահովելով սովորողների հետաքրքրությունը

. Ծանոթացնում է սովորողներին նախագծային տեխնոլոգիային

. Ձևավորում է նախագծային խմբեր՝ հաշվի առնելով սովորողների հետաքրքրությունը, անհատական կարողությունները

. Հստակեցնում է ձևավորված խմբերում կատարվելիք աշխատանքները

. Ընտրվում է յուրաքանչյուր խմբի ղեկավար

Որոշվում է յուրաքանչյուր խմբի անելիքները՝ չափորոշչային պահանջներին համապատասխան: Օրինակ՝ ներկայացվում է <<Օդ>> խմբին օդի առկա հիմնախնդիրները 3 ուղղություններով՝ օզոնային շերտի պահպանություն,ջերմոցային էֆեկտ,թթվային տեղումներ:

Պլանավորման փուլ

. Առաջարկվում են վարկածներ, հիմնախնդրի լուծման համար

. Քննարկվում են հնարավոր արդյունքները

Որոշվում է աշխատանքնրի իրականացման ժամկետները՝ վերջնական և միջանկյալ(ժամանակացույց)

. Բաշխվում են մասնակիցների միջև ուսումնական խնդիրները

. Կազմում են աշխատանքային պլան

. Աշակերտների նախաջեռնությամբ իրականացվում է տեղեկատվության հավաքագրում իրենց նախընտրած գրականության ցանկի համապատասխան:

Հետազոտական փուլ

Այն իր մեջ ներառում է հետևյալ քայլերը

. Հավաքվում և մշակվում է տեղեկատվություն (տեղեկատվության աղբյուրներ կարող են լինել հարցումներ, դիտարկումներ, փորջ, թղթակցություն, ինչպես նաև գրքերը, պարբերական հրատարակությունները, համացանցը)

. Պատրաստվում են եզրահանգումներ՝ հիմնավորվում ընտրված թեման, կազմում աղյուսակներ, պատկերում պաստառներ

. Ձևակերպվում են հետազոտական արդյունքները

. Պատրաստվում է կատարված աշխատանքի ներկայացմանը՝ զեկույցի և փոխադարջ քննարկման միջոցով:

Արդյունքների ներկայացման փուլ

Այն իր մեջ ներառում է հետևյալ քայլերը

. Արդյունքների շնորհանդեցի նախապատրաստում

. նախագծային աշխատանքիկ արդյունքների ցուցադրում՝ շնորհանդես

. Նախագծման ընթացքում կատարված աշխատանքների գնահատում ամբողջ խմբի և յուրաքանչյուր մասնակցի համար:

Սովորողները իրենց նախաձեռնությամբ, ցուցաբերելով ստեղծագործաբար մոտեցում, օգտվելով իրենց նախընտրած տեղեկատվության աղբյուրներից, գրքերից, համացանցից, տարբեր հոդվածներից, կարողացել են փնտրել ու գտնել իրենց առջև դրված խնդիրների լուծման ուղիները: Առանձին խմբերի անդամները խմբի ներսում սերտ համագործակցության արդյունքում կարողացել են հաղթահարել ծագած դժվարությունները և հասնել իրենց նպատակին:Աշակերտները կարողացան կարճ ու բովանդակալից ներկայացնել,թե ինչու է կարևոր պահպանել բնությունը,մթնոլորտային օդը,ջրային ու հողային ռեսուրսները,բուսական ու կենդանական աշխարհը,նշեցին օդի,ջրի,հողի,բույսերի ու կենդանիների դերը,անհրաժեշտությունը մարդու կյանքում:Ներկայացրեցին, թե մարդը ինչ բացասական ազդեցություն է ունենում դրանց վրա, թե ինչպես է անխնա ոչնչացնում թթվածնի աղբյուր հանդիսացող անտառները,աղտոտում մթնոլորտային օդը արդյունաբերական գործարանների և ավտոմեքենաների արտանետած թունավոր գազերով,թե ինչ վնաս են հասցնում էլեկտրաէներգիա արտադրող ատոմաէլեկտրոկայանները,բացատրեցին գլոբալ տաքացման նթթվային տեղումների պատճառներ:,Նշեցին նաև, որ մարդիկ իրենց շահույթից ելնելով զբաղվում են որսագողությամբ և անթույլատրելի ձկնորսությամբ,որ կենցաղային աղբը և արդյունաբերական թափոնները

մեծ վնաս են հասցնում ջրային ավազաններին,այնտեղ ապրող կենդանիներին,աճող բույսերին։Վերջում երեխաները առաջարկեցին տարբեր ճանապարհներ,որոնց միջոցով կկարողանան բարելավել մեր մոլորակի վիճակը։Առաջարկեցին կտրած մեկ ծառի փոխարեն տնկել տասը տնկի,էլեկտրական էներգիա ստանալու համար համատարած օգտագործել արևային մարտկոցներ,խիստ ձևով պատժեն որսագողությունը , անթույլատրելի ձկնորսությունը և այլն։

Աղբն ու մոլորակը

Նախագծային աշխատանքին պատրաստվելու ընթացքում կրտսեր ընկերներին իր աջակցությունն է հայտնել ավագ դպրոցի աշակերտուհի Լիլիթ Հարությունյանը։Նա իր նախաձեռնությամբ ներկայացրեց 《Աղն ու մոլորակը》 թեմայով սալիկահանդես։Նա խոսեց աղբի և թափոնի տարբերության ,աղբից ազատվելու եղանակների մասին։Ներկայացրեց ,որ աղբ է կոչվում այն , ինչը հ նարավոր չէ մշակել,իսկ այն ինչը հնարավոր է մշակել կոչվում է թափոն։Նա խոսեց նաև աղբի տեսակավորման կարևորության մասին,որը պետք է իրականացնի յուրաքանչյուր անձ իր ընտանիքում և աստիճանաբար այն դարձնի որպես մշակույթ։

Եւ վերջում չմոռանանք նշել,որ պահպանել բնությունը նշանակում է պահպանել մեր տունն ու հայրենիքը։

Եզրակացություն

Նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորման արդյունքում սովորողների մոտ առաջանում է.

*Նոր գաղափարներ ստեղծելու ունակություն
*մտքի սահունություն,ճկունություն
*հետաքրքրասիրության առաջացում գիտության նկատմամբ
*երևակայության զարգացում
*անկաշկանդ խոսքի ձևավորում
*վստահության,ինքնուրույնության ձևավորում
*համագործակցելու ունակության ձևավորում
*պատճառահետևանքային կապերը վերլուծելու և որոշումներ կայացնելու հմտություն
*ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն նախագծեր իրականացներու կարողություն և այլն:

Առաջարկություն

Ամփոփման փուլում երեխաները ցանկություն հայտնեցին էքսկուրսիա կազմակերպել,այցելել՝

* բնության թանգարան,

*Խոսրովի Արգելոց,

*արդյունսբերական տարբեր գործարաններ:

Գրականության ցանկ

1. Ա. Գասպարյան, Ռ. Մկրտչյան, Լ. Վալեսյան, <<Բնօգտագործում և բնապահպանություն>>

2. Կարինե Չիբուխչյան, <<Սովորողների ստեղծագործական ունակությունների ձևավորում>>

3. Մ. Դավթյան, (2010), <<Շրջակա միջավայր և բնապահպանություն>>

4. Նախաշավիղ N3 , (2013)